րական օրենսգրքերում 2016 թվականին կատարված փոփոխություններով<sup>12</sup> պարզեցված վարույթների կարգով քննվող գործերով նախատեսվել է վճռահատության «պարզեցված» կարգ: Այսպես, ըստ ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232.4 և արբիտրաժային օրենսգրքի 229 հոդվածների՝ պարզեցված վարույթի կարգով քննվող գործով դատարանի վճիռը կայացվում է դրա եզրափակիչ մասը ստորագրելու միջոցով, որը կցվում է գործի նյութերին և տեղադրվում է դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրը: Ընդ որում, դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձի պահանջով հնգօրյա ժամկետում կազմել և գործին մասնակցող անձանց տրամադրել պատճառաբանված դատական ակտ՝ ապահովելով պատճառաբանված դատական ակտ ստանալու կողմի իրավունքը: Կարծում ենք, որ քննարկվող հարցը մանրամասն գիտական վերլուծության և հետագա մշակման կարիք ունի՝ նկատի ունենալով այն, որ հստակ ձևակերպված և անհրաժեշտ երաշխիքներ նախատեսող կարգավորման պայմաններում նշված քայլը կատարելու դեպքում քաղաքացիական գործեր քննող դատավորները էապես կբեռնաթափվեն:

Բավականին առաջադիմական քայլ է կատարվել գործով վերջնական դատական ակտի հրապարակման կանոնները «պարզեցնելու» ուղղությամբ: Նպատակ ունենալով խնայելու գերձանրաբեռնվածության պայմաններում արդարադատություն իրականացնող դատարանների, վեճի շուտափույթ լուծման ձգտող գործին մասնակցող անձանց ժամանակը, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման մակարդակը և դրանց մատչելիության աստիճանը՝ պարզեցված վարույթի կարգով քննվող գործն ըստ էության լուծող դատական ակտերի հրապարակման համար նախատեսվել է պարզեցված ընթացակարգ: Մասնավորապես, Նախագծի 264 հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ նման կարգավորումը հակասում է ՀՀ Սահմանադրության 63 և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող «իր գործի հրապարակային քննության» իրավունքի հետ:

ՄԻԵԴ-ի նախադեպային ակտերի, ինչպես նաև առաջադեմ որոշ երկրների դատավարական օրենսդրության վերլուծությունը հիմք է

---

<sup>12</sup> Ст' u Федеральный закон № 45-ФЗ от 02.03.2016 г. «О внесении изменений в Гражданский процессуальный кодекс Российской Федерации и Арбитражный процессуальный кодекс Российской Федерации»: Ուժի մեջ է մտել 01.09.2016 թ.:

տալիս եզրակացնելու, որ կայացված դատական ակտերի մասին տեղեկացնելու այլ ձևերը ևս թույլատրելի են և չեն խախտում հրապարակայնության սկզբունքը:

Այսպես, ՄԻԵԴ-ի «Պրետտոն ընդդեմ Իտալիայի» գործով<sup>13</sup> դատարանը միաձայն որոշել է, որ դատարանի վճիռները դատական մատչանում գրանցելու ընթացակարգը «գործի հրապարակային քննության», «վճռի հրապարակման» պահանջի խախտում չի առաջացրել: Դատարանի կարծիքով՝ Կոնվենցիայի 6(1) հոդվածով հետապնդվող նպատակը (որը արդար դատաքննության երաշխավորման նպատակով դատարանի նկատմամբ հանրային հսկողություն սահմանելն է) դատարանում տեղի ունեցած դատավարության առնչությամբ տվյալ դեպքում ապահովվել է ոչ նվազ չափով, քան կապահովվեր, եթե որոշումն ընթերցվեր դոնբաց դատական նիստի ժամանակ, մանավանդ որ այդ ընթերցումը հաճախ սահմանափակվում է գուտ օպերատիվ դրույթների հրապարակմամբ (պարբ. 27):

«Մոսերն ընդդեմ Ավստրիայի» գործով կայացված վճռի<sup>14</sup> 101-րդ պարբերության մեջ նշվում է. ««Վճիռը հայտարարվում է հրապարակայնորեն» ձևակերպումից կարող է թվալ, որ դատարանում այն բարձրաձայն ընթերցելը պարտադիր է: Սակայն դատարանը համարում է, որ վճիռը հրապարակելու այլ եղանակներ ևս կարող են համապատասխանել Կոնվենցիայի 6(1) հոդվածին»: Ինչպես իրավացիորեն նշում է հոլանդացի դատավարագետ պրոֆ. Ս. Շ. վան Ռին, «բոլոր այն դեպքերում, երբ վճիռը դոնբաց դատական նիստում չի հրապարակվում, կիրառված մյուս միջոցները պետք է ապահովեն բավարար հրապարակայնություն... վճիռը հրապարակելու այլ եղանակներ նախատեսելիս բոլոր պարագաներում պետք է ապահովել վճռի հասանելիությունը ոչ միայն կողմերին, այլ նաև շահագրգիռ հանրությանը»<sup>15</sup>:

Պարզեցված վարույթի կարգով կայացված դատական ակտը դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով, ըստ էության, ապահովվում է դրա հասանելիությունը ոչ միայն կողմերի, այլ նաև ՋԼՄ-ների, քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կազմակերպությունների և քաղաքացիների համար՝ երաշխավորելով արդար դատաքննության երաշխավորման նպատակով դատարանի նկատմամբ հանրային հսկողությունը: Ընդ որում, որպես գործին մասնակցող անձանց համար կայացված ակտի հասանելիության ապահովման լրացուցիչ երաշխիք, Նախագծով նախատեսվել է կայացված դատական ակտը կողմերին ուղարկելու դատարանի պարտականությունը: Ըստ 264 հոդվածի 2-րդ մասի՝ վերջնական դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան

<sup>13</sup> Sté u Pretto and others v. Italy (1983), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57561>:

<sup>14</sup> Sté u Moser v. Austria (2006), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-76956>:

<sup>15</sup> «Reform of the Armenian Code of Civil Procedure», p. 20.

դրա կայացման հաջորդ օրը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Նկատի ունենալով, որ պարզեցված կարգը ենթադրում է ոչ միայն գործերի արագ քննություն և լուծում, այլ նաև վճռի օպերատիվ կատարում<sup>16</sup>, Նախագիծը սահմանել է պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի **օրինական ուժի մեջ մտնելու և դրա դեմ վերաքննիչ բողոք բերելու կրճատ ժամկետներ**: Մասնավորապես նախատեսվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռը, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին որոշումը օրինական ուժի մեջ են մտնում կայացնելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (264 հոդվ., մաս 3), հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը՝ այն կայացնելու օրվանից յոթնօրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (264 հոդվ., մաս 4):

Թեև վերը հիշատակված եվրոպական կանոնակարգի 17 հոդվածը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(95)5 և R(81)7 հանձնարարականները<sup>17</sup> թույլ են տալիս բացառել փոքր չափով դրամական հատուցումների վերաբերյալ գործերով կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, Նախագիծը մշակելիս, այդուհանդերձ, որոշվել է նման քայլի չդիմել՝ բավարարվելով վերաքննիչ բողոքարկման կրճատ ժամկետների սահմանմամբ, ինչպես նաև վճռաբեկ բողոք բերելու հիմքերի սահմանափակմամբ: Նախ՝ Նախագծի 321 հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև դրանց՝ օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի ավարտը: Այնուհետև սահմանափակվել է պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը բողոքարկելու հիմքերի շրջանակը: Մասնավորապես սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարանի բացառապես 324 հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով, այսինքն՝ դատարանի կողմից դատավարական նորմե-

<sup>16</sup> St´u **Матулович В.** Революция в упрощенном производстве // «Юридический справочник руководителя». М., 2012, август // <http://delo-press.ru/articles.php?n=10857>:

<sup>17</sup> St´u Recommendation № R(81)7 of the Committee of Ministers to member states on measures facilitating access to justice (Adopted by the Committee of Ministers on 14 May 1981 at its 68th Session), <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168050e7e4>, Recommendation № R(95)5 of the Committee of Ministers to member states concerning the introduction and improvement of the functioning of appeal systems and procedures in civil and commercial cases (Adopted by the Committee of Ministers on 7 February 1995 at its 528th meeting of the Minister’s Deputies), <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c>:

րի այնպիսի խախտումներ կատարելու հիմքերով, որոնց պարագայում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման:

Ափոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսվել է պարզեցված վարույթի կարգով քաղաքացիական գործերի քննության բավականին ճկուն ընթացակարգ, որը հնարավորություն կտա զգալիորեն կրճատելու քաղաքացիական գործերի քննության ժամկետները, բացառելու պարզ գործերով տևական դատավարությունները, թեթևացնելու առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածությունը, խնայելու դատարանի և կողմերի ժամանակը՝ վերջիններիս համար ապահովելով օպերատիվ, արդյունավետ և ոչ ծախսատար դատական պաշտպանության հնարավորություն: Բոլոր նշված հանգամանքները, մեծ հաշվով, էապես կնպաստեն նաև Հայաստանում արդարադատության որակի բարելավմանը և դատական իշխանության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացմանը:

**Բանալի բառեր** – *պարզեցված ընթացակարգեր, պարզեցված վարույթ, արագացված դատաքննություն, փոքր հայցագին ունեցող գործեր, ապացույցների ներկայացման կարգ, գործի քննություն առանց դատական նիստ հրավիրելու, դատարանների ծանրաբեռնվածություն, գործերի քննության և լուծման օպտիմալացում, արդարադատության արդյունավետություն*

**СЕРГЕЙ МЕГРЯН – Упрощенное производство в проекте Гражданского процессуального кодекса РА.** – В статье рассматривается институт упрощенного производства, предусмотренный в проекте Гражданского процессуального кодекса Армении. Проанализированы сущность и основные особенности данного вида производства, его основные преимущества и роль с точки зрения снижения судебной нагрузки, оптимизации рассмотрения и разрешения гражданских дел и повышения эффективности правосудия.

На основе доктринальных подходов к особенностям рассмотрения дел с небольшим размером исковых требований, а также анализа транснациональных стандартов гражданского процесса, рекомендаций Совета Европы, зарубежного опыта и отечественной судебной практики детально рассмотрены вопросы, касающиеся дел, рассматриваемых в порядке упрощенного производства. Речь идёт также о делах с небольшим размером исковых требований и обстоятельствах, исключающих рассмотрение дела в порядке упрощенного производства. Кроме того, в статье анализируется процессуальный порядок перехода к упрощенному порядку рассмотрения и разрешения дела в суде первой инстанции. Сформулированы и обоснованы некоторые замечания и предложения по усовершенствованию данного вида производства.

Делается вывод, что процедуру упрощенного производства, предусмотренную в проекте ГПК РА, можно считать удачной и соответствующей транснациональным стандартам. Она будет способствовать существенному снижению судебной нагрузки, сокращению временных и финансовых затрат, ускоренному получению судебной защиты и в целом реализует важнейшие задачи судопроизводства – процессуальную экономию и оптимизацию рассмотрения и разрешения гражданских дел.

**Ключевые слова:** упрощенные процедуры, упрощенное производство, ускоренное производство, небольшой размер исковых требований, порядок представления доказательств, рассмотрение дела без судебного заседания, судебная нагрузка, оптимизация рассмотрения и разрешения гражданских дел, эффективность правосудия

**SERGEY MEGHRYAN – *Simplified Procedure in the Draft Civil Procedural Code of the Republic of Armenia.***– The present article is scrutinizing the institution of simplified procedure envisaged in the draft Civil Procedural Code of the Republic of Armenia. The essence and key features of the procedure mentioned, its main advantages and the role in terms of reducing court load, optimization of hearings, settlement of civil cases and enhancing the efficiency of justice are analyzed.

Based on doctrinal approaches towards the issue of consideration of cases with rather small demands in claim as well as analysis of trans-national standards of civil procedure, recommendations of the Council of Europe, foreign practice and domestic case law the author has conducted detailed study on the circle of cases considered through simplified proceedings, the notion and criteria of “small claims”, the circumstances ruling out the discretion to consider and settle the case through simplified proceedings. Along with this, the article scrutinizes the procedural order of moving to simplified proceedings of consideration of the case, the peculiarities of consideration and settlement of the case in the court of first instance, including the special order of presenting and examining the procedural material, publication, entering into force and challenging of the court ruling. Within the article several remarks and suggestions have been formulated and substantiated towards enhancing the specific type of proceedings at stake.

The conclusion is drawn up that the simplified proceedings envisaged in the draft Civil Procedural Code of RA should be considered as successful and in line with trans-national standards of settlement of cases through simplified proceedings. In the author’s opinion, it may be helpful to reduce considerably the court load, to eliminate time and financial expenses of persons involved in the case, expedient granting of judicial protection and realization of the most important tasks of litigation in general – procedural economy and optimization of consideration and settlement of cases.

**Key words:** *simplified proceedings, simplified procedure, speedy procedure, small claims, order of presenting evidences, considering the case without court hearing, court load, optimization of consideration and settlement of civil cases, efficiency of justice*



# ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

### ԳՆԵԼ ՄՈՒՂՆԵՅՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՄՅԱՆ

Դատական իշխանության՝ որպես գործառնության ռու կառուցակարգային համակարգի և արդարադատության՝ որպես գործընթացի իրավական կանոնակարգման հիմնահարցերը մշտապես գտնվել են հայրենական իրավական գիտական հետազոտությունների կիզակետում<sup>1</sup>, կազմել պետաիրավական պրակտիկայի (այդ թվում՝ իրավաստեղծ գործունեության) նկատելի հատվածը<sup>2</sup> և կարևորվել միջազգային իրավական ու քաղաքական գործընթացներում<sup>3</sup>: Գիտական և գործնական միտքը փոր-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Գ. Հարությունյան**, Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Եր., 2002, **Մ. Խաչատրյան, Դ. Խաչատրյան**, Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում (իրավահամեմատական վերլուծություն), Եր., 2002, **Ա. Ղամբարյան**, Հայաստանի Հանրապետության արդարադատության սահմանադրաիրավական հիմքերը, ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2006, **Ե. Դանիելյան**, Հայաստանում դատական իշխանության զարգացման տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները (պատմատեսական և իրավական վերլուծություն), ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2014, **Տ. Մուկուչյան**, Դատական իշխանությունը և դրա իրականացման տեսաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2015 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա հրամանագիր (ՀՀՊՏ 2012.07.11/33(907)), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Capmbell and Fell v. The United Kingdom* գործով 1984 թվականի հունիսի 28-ի վճիռը, զանգատներ թիվ 7819/77, 7878/77, կետեր 76-82, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի ԳԴ5/0022/01/10 գործով կայացրած որոշումը և այլն:

<sup>3</sup> Այս առումով հատուկ կարևորվում են «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի Եվրոպական խարտիան և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանադրության սկզբունքները», Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 և 2010 թվականի նոյեմբերի 17-ի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականները, ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ» Կիևի հանձնարարականները (<http://www.osce.org/ru/odihr/73488?>

ձել է հնարավորինս առարկայացնել դատական իշխանության կազմավորման ու գործունեության սահմանադրաիրավական խնդիրները:

Վերոհիշյալ հարցերը դիտարկելիս, մեր կարծիքով, որոշիչ նշանակություն ունի դատավորի կարգավիճակի համալիր վերլուծությունը<sup>4</sup>, քանի որ **դատական իշխանության անմիջական և միակ կրողի<sup>5</sup>, ըստ այդմ էլ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օժտված անձի<sup>6</sup>** դատավորի սոցիալական առաքելություն ստանձնելու և դադարեցնելու գործընթացների, պատասխանատվության, լիազորությունների, գործառույթների (իրավական, արժեքային, փաստացի և այլն), գործունեության երաշխիքների և ներուժի համարժեք և լիարժեք ամրագրումն ու փաստացի առկայությունն այն ցուցիչներն են, որոնք հնարավոր են դարձնում որոշել դատական իշխանության իրական և անհրաժեշտ անկախության աստիճանը և գնահատել արդարադատության որակական բնութագրիչները:

Դատավորի պատասխանատվության ինստիտուտի՝ որպես դատավորի իրավական կարգավիճակի տարրի առանձնացումը պայմանավորված է մի կողմից դատավորի իրավական պաշտպանվածության ապահովման մտահոգությամբ և խնդրի հրատապությամբ, մյուս կողմից՝ դատավորի պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ հայեցակարգի մշակման անհրաժեշտությամբ:

Բանն այն է, որ վերջին տարիներին մեծ է Արդարադատության խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորների թիվը, որոնց իրավական պաշտպանվածության հարցը այդպես էլ համակողմանի լուծում չի ստացել<sup>7</sup>:

---

download=true), Վենետիկի հանձնաժողովի մի շարք եզրակացություններ ու զեկույցներ (CDL-AD(2014)018 [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)018-rus](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)018-rus) կայքում, CDL-AD(2010)004 [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2010\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2010)004-e) կայքում, CDL(2012)084-rus [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2012\)084-rus](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2012)084-rus) կայքում, CDL-JD(2009)001 [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2009\)001-rus](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2009)001-rus) կայքում և այլն), «Արդարադատության ապահովման համակարգերի արդյունավետությունը», զեկույց, [http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/cooperation/Eastern\\_partnership/Premis%20145613%20RUS%202047%20EasternPartnershipEnhancingJudicialReform%20TXT%20A4.pdf](http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/cooperation/Eastern_partnership/Premis%20145613%20RUS%202047%20EasternPartnershipEnhancingJudicialReform%20TXT%20A4.pdf) կայքում) և այլն:

<sup>4</sup> Դատավորի կարգավիճակի հարցերի համակողմանի հետազոտությունը տե՛ս **Клеандров М. И.** Статус судьи: правовой и смежные компоненты. М., 2008:

<sup>5</sup> Դատավորի այդպիսի բնորոշում է առկա ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թ. սեպտեմբերի 20-ի ՄԴՈ-647 որոշման (ՀՀՊՏ 2006.11.01/56(511)) տեքստում (11-րդ կետ):

<sup>6</sup> ՀՀ դատական օրենսգրքի (ՀՀՊՏ 2007.04.18/20(544)) 4 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Յուրաքանչյուր դատավոր օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ:

<sup>7</sup> Մասնավորապես՝ Արդարադատության խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի ԱԽ-11-Ո-22, 2011 թվականի հունիսի 24-ի ԱԽ-13-Ո-17, 2015 թվականի ապրիլի 13-ի ԱԽ-13-Ո-15, 2015 թվականի ապրիլի 13-ի ԱԽ-13-Ո-16, 2015 թվականի ապրիլի 13-ի ԱԽ-13-Ո-17, 2015 թվականի ապրիլի 13-ի ԱԽ-13-Ո-18 և այլ որոշումների տեքստերի ուսումնասիրությունից ոչ միայն ակնհայտ է դառնում դրանց տեքստերում միաբնույթ, նույնաբովանդակ ձևակերպումների առկայությունը, վերլուծությունների միօրինակությունը, այլև բացակայում են դատավորին պատասխանատվության ենթարկելու գործ-

Այսպես՝ ՀՀ դատական օրենսգրքի 158 հոդվածը սահմանում է. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»: Այս հոդվածի սահմանադրականությունը գնահատելիս, անդրադառնալով ՀՀ արդարադատության խորհրդի կարգավիճակի և լիազորությունների հարցին, ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՄԴՈ-1063 որոշմամբ մի կողմից ՀՀ արդարադատության խորհուրդը դիտում է որպես **դատական իշխանության համակարգի գործառական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ**, սահմանադրական նորմերի իրացման (իրավակիրառական) հարթությունում առաջին անգամ վեր է հանում և բացահայտում նրա սահմանադրաիրավական կարգավիճակի բովանդակությունը և օրենսդրին առաջարկում է քննարկել խորհրդի գործունեության **առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին**, մյուս կողմից, սակայն, իրավասպառի է գնահատել Արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը, այն պարագայում, երբ խնդիրը քննարկում է դատական իշխանության համակարգի անկախության ապահովման **սահմանադրական երաշխիքների ամրագրման տեսանկյունից: Մինչդեռ խորհրդի կողմից կարգապահական վարույթի իրականացումը չի սահմանափակվում կամ բնութագր-**

---

ընթացի (կարգապահական վարույթի) բնույթի և նշանակության **սահմանադրական ընկալումը և մեթոդաբանությունը**, քանի որ չկան հստակ կառուցակարգեր, գնահատման չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հնարավոր կդարձնեին պարզելու Արդարադատության խորհրդի հայեցողության սահմանները, իրացման կողմնորոշիչները, կարգապահական պատասխանատվության միջոցի ընտրության մեխանիզմը: Ըստ որում՝ որոշ բացառություններով հանդերձ (ՀՀ իրավական և դատաիրավական համակարգի համար, անշուշտ, նախադեպային նշանակություն ունեին դատավորներ Ա. Մադաթեյանի, Լ. Մնացականյանի, Պ. Օհանյանի պաշտոնանկության գործընթացները, որոնք ստացան հանրային հնչեղություն)՝ այդ գործընթացներն ընթացել են մեծ մասամբ ոչ հրապարակային պայմաններում՝ նվազեցնելով դատական իշխանության ներսում տեղի ունեցող գործընթացների սահմանադրական և հասարակական հսկողության արդյունավետությունը: Եվ թեև ՀՀ սահմանադրական դատարանը (2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՄԴՈ-647, 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՄԴՈ-1063 (ՀՀՊՏ 2013.01.08/1(941)) որոշումներ), ՄԻԵԴ-ը (2015 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռ, թիվ 7984/06 զանգատ) որոշակիորեն ձևակերպել են իրենց դիրքորոշումներն այդ կապակցությամբ, այդուհանդերձ՝ դատավորի սոցիալ-իրավական պաշտպանվածության երաշխիքների համակարգը (պոզիտիվ իրավունքում) և իրավագիտական հայեցակարգը (սահմանադրական իրավունքի գիտության կողմից) դեռևս լիարժեքորեն մշակված չեն:

վում վարչական դատավարության գործընթացին հատուկ ընթացակարգերով (առավել ևս՝ էությունը), որպիսի հանգամանքը, իհարկե, չի բացառում վարչական դատավարության առանձին սկզբունքների (օրինակ՝ գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե (ex officio) պարզումը) և նորմերի կիրառումը, քանի որ առանձին ինստիտուտների և տարրերի առկայությունը սահմանադրական վարույթում ոչ միայն չի փոխում դրա սահմանադրական բնույթը, այլև ընդգծում է ընդհանրացնող (համընդգրկուն) գործընթացի իրավական իրական սահմանները:

Իր որոշմամբ, վեր հանելով և մասամբ լուծելով Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի խնդիրները, Մահմանադրական դատարանը, այդուհանդերձ շրջանցել է դատավորի կարգապահական պատասխանատվության բնույթի և բովանդակության վերաբերյալ հարցադրումները՝ առկախելով դրանց սահմանադրականության գնահատումը, և առաջադրել է որոշակի նախադրյալներ խնդրի գիտական իմաստավորման համար: Այնինչ հիմնախնդրի համալիր գիտագործնական ուսումնասիրման և լուծման համար էական նշանակություն ունի թե՛ Մահմանադրական դատարանի և թե՛ Արդարադատության խորհրդի՝ ըստ էության դատաիրավակիրառական պրակտիկայի հետազոտումը, քանի որ, ինչպես իրավագիտորեն նշում է Ն. Ս. Բոնդարը, որպես սահմանադրականության սահմանադրական-գործնական (իրավակիրառական) բաղադրիչի դրսևորում, դատական պրակտիկան միաժամանակ զգալիորեն ազդում է դրա նորմատիվ բովանդակության վրա: Մասնավորապես՝ այն (դատական պրակտիկան) ձևավորում է այս կամ այն հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման իմաստի նախադեպային ընկալումը...<sup>8</sup>:

Այդ կապակցությամբ, կարծում ենք, ելակետային են հետևյալ հարցադրումները

- ինչ բնույթ և բովանդակություն ունի դատավորի պատասխանատվության ինստիտուտը (վարույթը)<sup>9</sup>,

- ինչպիսի գործընթաց է դատավորի կարգապահական պատասխանատվության վարույթը, որո՞նք են դրա առանձնահատկությունները և հետևանքները,

- ովքե՞ր են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի սուբյեկտները:

Այս հարցադրումների և դրանց պատասխանների համար մեթոդաբանական և փորձարարական հիմք են ՀՀ արդարադատության

<sup>8</sup> Տե՛ս **Бондарь Н. С.** Российский судебный конституционализм: введение в методологию исследования. Серия «Библиотечка судебного конституционализма». Вып. 1, М., 2012, էջ 47:

<sup>9</sup> Սույն հոդվածում վարույթը և ինստիտուտը դիտվում են որպես ինքնավար և միևնույն ժամանակ փոխընդհանուր կատեգորիաներ, որոնց տարբերակումը ընդգծվում է ըստ համատեքստի և ենթատեքստի:

խորհրդի գործունեության վերյուծությունը, խնդրո առարկայի սահմանադրական, միջազգային իրավական, դատական (դատարանակազմական և դատավարական) օրենսդրությունը և տեսական աղբյուրները, որոնք դիտարկվում են իրավական պետության (իրավունքի գերակայության) սկզբունք-հայեցակարգի համատեքստում<sup>10</sup>:

ՀՀ սահմանադրական օրենսդրությունը (Անկախության հռչակագիրը, 1995 թվականի Սահմանադրությունը, Սահմանադրության 2005 և 2015 թվականների փոփոխությունները), դրան համապատասխան՝ ընթացիկ օրենսդրությունը («Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենք<sup>11</sup>, «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք<sup>12</sup>, «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենք<sup>13</sup>, ՀՀ դատական օրենսգիրք) արտացոլում են նորմատիվ-տեքստային մակարդակում դատավորի պատասխանատվության ինստիտուտի իրավական կարգավորման էվոյուցիան:

ՀՀ Սահմանադրության տեքստում (այլ նորմատիվ ակտերում նույնպես) բացակայում են ինչպես «սահմանադրական (սահմանադրաիրավական) պատասխանատվություն», այնպես էլ «դատավորի սահմանադրական (սահմանադրաիրավական) պատասխանատվություն» եզրույթները: Սակայն ՀՀ գործող Սահմանադրության մեջ (2005 թվականի փոփոխություններով կարգավորումներ) դատավորի պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ իրավադրույթների վերլուծությունը (պետք է դիտարկել 55 հոդվածի 11-րդ կետի<sup>14</sup>, 95 հոդվածի 5-րդ կետի<sup>15</sup> և 97 հոդվածի 2-րդ մասի<sup>16</sup> համակցությամբ), իրավական այլ իրողությունները (այդ թվում՝ իրավակիրառական պրակտիկա) և դոկտրինալ մոտեցումները հիմք են ստեղծում բնորոշելու

---

<sup>10</sup> Տվյալ դեպքում որպես նորմատիվ և դոկտրինալ արժեքային կողմնորոշիչ է ընդունվել 2011 թվականի մարտի 25-26-ին Վենետիկում կայացած Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 86-րդ լիազուսմար նիստում ընդունված «Իրավունքի գերակայության վերաբերյալ» հետազոտություն-գեկույցը, որի հիմքում ընկած է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից 2007 թվականին ընդունած «Իրավունքի գերակայության սկզբունքի վերաբերյալ» № 1594 որոշումը (բանաձևը):

<sup>11</sup> ՀՀԱԺՏ 1995/7: Ընդունվել է 23.10.1995 թ., ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2007 թ.:

<sup>12</sup> ՀՀՊՏ 1998.07.27/15(48): Ընդունվել է 17.06.1998 թ., ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2007 թ.:

<sup>13</sup> ՀՀՊՏ 1998.07.27/15(48): Ընդունվել է 18.06.1998 թ., ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2007 թ.:

<sup>14</sup> «Հանրապետության Նախագահը արդարադատության խորհրդի առաջարկությամբ դադարեցնում է ... նրանց լիազորությունները»:

<sup>15</sup> «Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրան կատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին»:

<sup>16</sup> «Դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

դատավորի կարգավիճակի էական տարրի՝ կարգապահական պատասխանատվության ինստիտուտի և իրավագոր գործընթացի սահմանադրաիրավական որակը և ուրվագծելու բնութեական (քվինտէսենցիալ) հատկանիշները (**սահմանադրական** էությունը, բովանդակությունը, բնույթը, նշանակությունը և հետևանքները):

Դատավորների նշանակման<sup>17</sup> և պատասխանատվության (այդ թվում՝ պաշտոնից ազատելու) որոշ հարցեր քննարկվել են առանձին հեղինակների կողմից, սակայն այդ հետազոտություններն ընդգրկել են պատասխանատվության առավելապես դատավարական և դատարանակազմական առումները<sup>18</sup>: Պատասխանատվության սահմանադրական բնույթի ու բովանդակության կապակցությամբ որոշակի վերլուծություն է արված որոշ աշխատանքների<sup>19</sup> դատական իշխանությանը վերաբերող հատվածներում, այդուհանդերձ՝ դրանցում նույնպես հստակորեն չի ձևավորվել դատավորի կարգապահական պատասխանատվության սահմանադրական բնույթի վերաբերյալ հայեցակարգը:

Այսպես, օրինակ՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 95 հոդվածի մեկնաբանություններում նշվում է. «Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նորմերը ընդհանուր պատասխանատվության նորմերից տարբերվում են՝

---

<sup>17</sup> Տե՛ս **Դ. Խաչատրյան**, Դատավորների նշանակումն ու առաջխաղացումը Հայաստանի Հանրապետությունում՝ միջազգային եվրոպական չափանիշների տեսանկյունից, 2002 | Հոդված/Article, «Օրինաթերթ», Հ-12(52), 2002, էջ 17-24: Հարկ է նկատել, սակայն, որ նշված ուսումնասիրությունը կատարվել է մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները:

<sup>18</sup> Տե՛ս **Хачатурян Д. М.** Независимость судей в Республике Армения: судеоустойтвенные и уголовно-процессуальные гарантии. Автореферат дисс... уч. ст. канд. юрид. наук. Ер., 2000, **Ս. Ռ. Մարաբջյան**, Դատական ակտերի վերանայման հնարավորությունը դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշման հիման վրա // Դատական իշխանություն, թիվ 3/140, մարտ 2011, էջ 29-30, **Ա. Ս. Ղամբարյան**, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Եր., 2013, **Տ. Մկրտչյան**, Դատական իշխանությունը և դրա իրականացման տեսա-իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2015, **Գ. Ղազինյան, Ա. Հովհաննիսյան**, Նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և դրա իրավական հետևանքները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015, № 1 (16), էջ 13 և այլն:

<sup>19</sup> Տե՛ս «Конституционное (государственное) право зарубежных стран». В 4 т. Тома 1–2. Часть общая: Учебник. М., 2000, էջ 386-389, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», դասագիրք, 3-րդ հրատ., խմբագիր՝ Ն. Ա. Այվազյան, Եր., 2005, էջ 545-551, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 933-960, «2015 թվականի սահմանադրական փոփոխությունների նախագծի» հիմնավորումների V գլուխ (41-50 էջեր), **Գ. Բ. Դանիելյան, Վ. Ն. Այվազյան, Ա. Ա. Մանասյան** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործական հետազոտություն), Եր., 2015, էջ 159-188:

1. դրանց գործողության տակ բնկնող անձանց շրջանակով, 2. կարգապահական տույժի միջոցներով, 3. տույժերի կիրառման իրավունքով օժտված պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակով, 4. տույժերի կիրառման և դրանց բողոքարկման կարգերով: Չնայած այս առանձնահատկություններին, դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքը ևս, ինչպես որ վարչական պատասխանատվության հիմքը, կարգապահական խախտումն է, այսինքն՝ նրանց վրա դրված գործառույթային պարտականություններն իրենց մեղքով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Այդպիսի խախտման օբյեկտը դատական օրենսգիրքն է, դրա նորմերը, որոնք խախտվում են, օբյեկտիվ կողմը՝ դատավորի կողմից այնպիսի հակաիրավական գործողությունների կատարումը, որոնք հանգեցրել են վնասակար հետևանքների, սուբյեկտը դատավորն է, որը խախտել է աշխատանքային կարգապահությունը, իսկ սուբյեկտիվ կողմը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված մեղավոր գործողությունների նկատմամբ»: Մակայն այս աշխատանքում ևս դատավորի սահմանադրական կարգավիճակը քննարկելիս մի դեպքում շրջանցվում է նրա պատասխանատվության բնույթի հարցը, մյուս դեպքում այդպես էլ չի բացահայտվում կարգապահական խախտման բնույթը, մեկ այլ դեպքում այն դիտարկվում է աշխատանքային իրավահարաբերությունների տիրույթում, այնինչ մասնագիտական գրականության մեջ հատուկ նշվում է, որ հենց կարգապահական զանցանքի բնույթի որոշման բացակայությունը խնդիրը դարձնում է ոչ համարժեք հետազոտված<sup>20</sup>:

Սահմանադրական պատասխանատվության (դրա համատեքստում՝ դատավորի պատասխանատվության) հիմնախնդիրները սահմանադրական իրականության համակողմանի վերլուծության շնորհիվ առավել հիմնավոր արտացոլվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում<sup>21</sup>, որը հնարավորություն է տալիս սահմանելու խնդրո առարկայի համատեքստը և շրջանակը, ուրվագծելու դատավորին պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգի մեթոդաբանական հիմնադրույթները, որոնք ընկած են 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների<sup>22</sup> տեքստի և սահմանադրական լուծումների հիմքում:

Դոկտրինալ, տեքստաբանական, արժեբանական այս իրողությունները՝ որպես սահմանադրական իրողության ընկալման ելակետեր, ուղղորդող նշանակություն ունեն դատավորի պատասխանատվության ինստիտուտի նպատակները և վարույթի իրականացման ողջ գործընթացը ճիշտ ընկալելու հարցում, քանի որ **Սահմանադրույթ**

<sup>20</sup> Տե՛ս **Клеандров М. И.** Статус судьи: правовой и смежные компоненты. М., 2008, էջ 181:

<sup>21</sup> Տեքստը տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ([http://www.moj.am/storage/uploads/Sahmanadrakan\\_barepokhumner.14.10\\_.pdf](http://www.moj.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner.14.10_.pdf)):

<sup>22</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

**յան գերակայության և անմիջական գործողության** համատեքստում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս հարկ է լինելու գնահատել բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմեր-սկզբունքները (անհրաժեշտության դեպքում նույնիսկ դրանց ստորադասելով ընթացիկ օրենսդրության որոշ դրույթներ), վերանայելու իրավակիրառական պրակտիկան (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, Արդարադատության խորհրդի որոշումներն ու գործունեությունը, դատական քաղաքականությունը), վերաբժեղորելու դոկտրինալ ընկալումները և հայացքները:

Կարծում ենք, որ Հիմնական օրենքի տեքստում «դատավորի կարգապահական պատասխանատվություն» և «դատավորի լիազորությունների դադարեցում» հասկացությունները սահմանելով՝ սահմանադիրը նպատակ է ունեցել ամրագրելու դրանց հիմնարար բնույթը և նշանակությունը, բացահայտելու հանրային կյանքում այս սուբյեկտների (ինստիտուտների) գործառույթը և ընդգծելու դրանց կարևորության աստիճանը, քանի որ անկախ դատավորի պատասխանատվության տեսակից (վարչական, քրեական և կարգապահական<sup>23</sup>)՝ դատավորի պատասխանատվությունն ինքնին (որպես իրավական ինստիտուտ և իրավագործ գործընթաց), ի սկզբանե արտահայտվելով սահմանադրական տեքստային կադապարներում, ձեռք է բերում հիմնարար՝ սահմանադրական բնույթ:

Հարկ է նշել, որ հանրային իշխանության սահմանադրական պատասխանատվության հարցը միջազգային սահմանադրական պրակտիկայում վերջին տասնամյակներում առավել հրատապ է դարձել: Դրա մասին են վկայում Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 1993 թ. կատարված լրացումը և 10-րդ գլխի (68-1, 68-2 և 68-3 հոդվածներ) ամրագրումը, ինչպես նաև 1997 թ. ապրիլի 2-ին ընդունված Լեհաստանի նոր Սահմանադրության 198-201 հոդվածները, Պորտուգալիայի Սահմանադրության 22 և 117 հոդվածները, Հունաստանի Սահմանադրության 85 և 86 հոդվածները, Ֆինլանդիայի Սահմանադրության 101 պա-

---

<sup>23</sup> Սույն հոդվածում չեն դիտարկվում դատավորին վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացի առանձնահատկությունները, որոնք ունեն իրենց կարգավորումը վարչական, վարչադատարական, քրեական, քրեադատարական օրենսդրությամբ (դրանք, անշուշտ, ունեն սահմանադրական հիմք և բաղադրիչ, սակայն իրենց իսկ իրականացմամբ ունեն հստակ ճյուղային իրավական բնույթ, բովանդակություն և հետևանքներ): Բանն այն է, որ դատավորին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը (այդպիսի ձևակերպումներ էին առկա 1995 թվականի Սահմանադրության տեքստում, ինչպես նաև 2005 թվականի փոփոխություններով խմբագրության մեջ) և քրեական պատասխանատվության գործընթացում ներգրավելը (այդ թվում՝ նրա կալանավորելը, որպես մեղադրյալ ներգրավելը և այլն) բնութագրական են դատավորին որպես անձի, որը դատավորի պաշտոնն է զբաղեցնում: Այնինչ դատավորի՝ որպես արդարադատության սահմանադրական հարաբերությունների սուբյեկտի պատասխանատվության (կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ պաշտոնանկության) հարցը սահմանադրորեն կարևորվում է **ինքնին** և ունի ինքնուրույն **սահմանադրական քվինտեսենցիա** և **մասշտաբ**:



րագրաֆը, Ռումինիայի Սահմանադրության 108 հոդվածը, Խորվաթիայի Սահմանադրության 111 հոդվածը և այլն<sup>24</sup>:

Ինչ վերաբերում է դատավորի սահմանադրական (կարգապահական) պատասխանատվության սահմանադրական ձևակերպման հարցին, ապա այն արտասահմանյան պետությունների հիմնական օրենքներում (սահմանադրական տեքստերում) տարբեր կերպ է լուծվել: Ըստ այդմ՝ կարող ենք դասակարգել երեք խումբ երկրների սահմանադրական կարգավորումներ:

*Առաջին՝* երկրներ, որոնց սահմանադրությունների տեքստերում այն հատուկ կարևորություն և ուղղակի ձևակերպում չի ստացել (ՌԴ 1993 թվականի Սահմանադրություն, Բելառուսի Հանրապետության 1994 թվականի Սահմանադրություն, Դանիայի Թագավորության 1953 թվականի Սահմանադրություն, Էստոնիայի Հանրապետության 1992 թվականի Սահմանադրություն, Իսպանիայի Թագավորության 1978 թվականի Սահմանադրություն և այլն):

*Երկրորդ՝* երկրներ, որոնց սահմանադրական տեքստներն ուղղակիորեն ամրագրում են կարգապահական պատասխանատվության (խախտման) հասկացությունը և որոշակիորեն կանոնակարգում այն (օրինակ՝ Բելգիայի Թագավորության 1994 թվականի Սահմանադրության 151 հոդվածը ի մասնավորի նշում է Արդարադատության բարձրագույն խորհրդի կարգապահական լիազորությունների հնարավորության մասին, Խորվաթիայի Հանրապետության 1990 թվականի Սահմանադրության 120-121 հոդվածներում նշվում է կարգապահական ծանր զանցանքի հիմքով դատավորին պաշտոնից ազատելու և Պետական դատական վեչեի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Կոլումբիայի 1886 թվականի Քաղաքական Սահմանադրության 160 հոդվածը սահմանում է դատավորին կարգապահական տույժերի (այդ թվում՝ պաշտոնից ազատում) ենթարկելու հնարավորությունը, Ֆրանսիայի Հանրապետության 1958 թվականի Սահմանադրության 65 հոդվածը ամրագրում է Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի՝ որպես դատավորների նկատմամբ որոշումներ կայացնող կարգապահական խորհրդի կարգավիճակը, Իտալիայի Հանրապետության 1947 թվականի Սահմանադրության 105 հոդվածը նախատեսում է կարգապահական միջոցների կիրառման հնարավորություն, Ուկրաինայի 1996 թվականի Սահմանադրության 131 հոդվածը Արդարադատության բարձրագույն խորհրդին վերապահում է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման լիազորություն):

*Երրորդ՝* երկրներ, որոնց սահմանադրություններն անուղղակիորեն՝ անորոշ կամ էթիկական ձևակերպումներով են անդրադառնում

<sup>24</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշտադիտարկում, Եր., 2016, էջ 124-125:

դատավորների պատասխանատվության (այդ թվում՝ պաշտոնանկության) հիմքերի (նախադրյալների) հարցին (այսպես՝ Կանադայի 1867 թվականի սահմանադրական ակտի 99 հոդվածում հատուկ կարևորվում են բարեվարքության նորմերը, Արգենտինայի 1853 թվականի Սահմանադրության 96 հոդվածում և ԱՄՆ 1787 թվականի Սահմանադրության 3 հոդվածում՝ անբասիր վարքի պահպանման անհրաժեշտությունը, ԳԴՀ 1949 թվականի Հիմնական օրենքի 98 հոդվածում նշվում է Հիմնական օրենքի կամ սահմանադրական կարգի սկզբունքների խախտման դեպքում պաշտոնանկության մասին)<sup>25</sup>:

Պատասխանատվության հիմնարար-սահմանադրական բնույթն ակնհայտ է դառնում, երբ դիտարկում ենք կարգապահապական պատասխանատվության անխզելի և օրինաչափ փոխկապվածությունը դատարանի (փաստացի և անձնավորված՝ դատավորի) սահմանադրական-սցիալական առաքելության **արդարադատության իրականացման** գործընթացին. այս պարագայում կարգապահական պատասխանատվությունը **արդարադատության իրականացման գործընթացում** դատավորի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված խոչընդոտների վերացման բնականոն իրավական հետևանք և արձագանք է: Ինչպես նշում է Գ. Ելինեկը, պաշտոնյայի մեղքը իրեն և պետությանը միացնող կապի հանդեպ ոտնձգությունն է, իր գործառութային առաքելության վատ իրականացումը. ի պատիժ դրա՝ նրանից վերցվում է այդ առաքելությունը<sup>26</sup>: Իսկ այդ գործընթացն իրականացվում է հատուկ ընթացակարգով (վարույթով)<sup>27</sup> սահմանադրական

<sup>25</sup> Արտասահմանյան պետությունների հիմնական օրենքների վկայակոչումը՝ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայքի՝ [http://concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/consts21.html](http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/consts21.html)

<sup>26</sup> Տե՛ս **Дюги Л.** Конституционное право. Общая теория государства. М., 2014, էջ 295: Վերոհիշյալի ենթատեքստում վերլուծելով հանրային իշխանության կառուցակարգային տարրի հանրային ծառայության ինստիտուտը նկատում ենք, որ հանրային ծառայողի (որպիսին, համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (ՀՀՊՏ 2011, 06.17/37(840) 3 և 4 հոդվածների, համարվում է նաև դատավորը՝ որպես պետական քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձ) կարգապահական պատասխանատվության (տույժեր և պաշտոնից ազատել) կառուցակարգում (գլուխ 9) ևս հատուկ կարգավորվում է պատասխանատվության գործընթացը միաժամանակ նախատեսելով առանձնահատկությունների սահմանման հնարավորություն: Այսպես՝ օրենքի 46 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները, ինչպես նաև կարգապահական տույժ կիրառելու կարգը և դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են **պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը** կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով: Թեև օրենքով «բաց է մնում» հանրային այլ ծառայողների (տվյալ դեպքում՝ դատավորի) պատասխանատվության հարցը, սակայն, կարծում ենք, այդ խնդրի լուծումը պետք է որոնել հենց սահմանադրական կառուցակարգերում, այդ թվում՝ ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան հոդվածներում՝ սահմանադրական հայեցակարգի ներքո:

<sup>27</sup> Իրավաբանական գրականության մեջ սահմանադրական գործընթացը բնութագրվում է որպես լիազոր մարմինների և պաշտոնատար անձանց գործունեություն, որն ուղղված է իրավակիրառմամբ սահմանադրաիրավական նորմերի իրացմանը,

պատասխանատվության միջոցների կիրառմամբ:

Իրավաբանական գրականություն մեջ առանձին հեղինակներ սահմանադրական պատասխանատվությունը բնորոշելիս և վերլուծելիս դրանում ներառում են նաև դատավորի պատասխանատվության հարցերը: Ըստ Ռ. Հակոբյանի՝ սահմանադրական իրավախախտման, հետևաբար՝ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել բարձրագույն պաշտոնատար անձինք, ովքեր ունեն անձեռնմխելիության իրավունք (ՀՀ Նախագահ, պատգամավոր, **դատավոր**), և, ըստ այդմ, նախատեսված է նրանց սահմանադրական պատասխանատվության ենթարկելու հատուկ, առավել բարդ ընթացակարգ<sup>28</sup>: Պրոֆ. Գ. Հարությունյանը առանձնացնում է սահմանադրական պատասխանատվության հատկանիշները (հանրային իրավունքի ոլորտին պատկանելը, համաչափության սահմանադրական սկզբունքի երաշխավորումը՝ որպես հիմնական չափանիշ, և այլն)<sup>29</sup>, որոնք բնութագրական են նաև դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտին:

Սահմանադրական տեքստերի (Սահմանադրության 1995, 2005,

---

որի ընթացքում սուբյեկտները ղեկավարվում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական նորմերով: Միաժամանակ այդ գործունեությունն ուղղված է առկա իրավական վիճակի վերլուծությանն ու լուծմանը միասնական (նյութական-դատավարական) իրավական բազայի օգտագործմամբ: Ըստ որում՝ սահմանադրական վարություն որպես իրավաբանական գործի առարկա կարող են լինել ոչ միայն դրական հանգամանքները, այլև իրավունքի մասին վեճը կամ իրավախախտման փաստը, քանի որ սահմանադրաիրավական պրակտիկայում բացառված չեն այնպիսի իրավախախտումները, որոնք պահանջում են պետական հարկադրանքի և ճյուղային պատասխանատվության հատուկ եղանակների կիրառում (տե՛ս **Жакаева Л. С.** Конституционный процесс в Республике Казахстан: теоретико-правовые вопросы. Автореферат дисс.... д. ю. н., М., 2008):

<sup>28</sup> Տե՛ս **Ռ. Հակոբյան**, Սահմանադրական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում: Մեղմագիր, ի. գ. դ. գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2012: Ըստ հեղինակի՝ սահմանադրական պատասխանատվությունը բնութագրվում է որոշակի նպատակներով, այն է՝ Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի գերակայության և անմիջական գործողության ապահովում, սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանություն, Սահմանադրության հիման վրա պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետ գործունեության ապահովում, պետական իշխանության բաժանման, «զսպումների ու հակակշիռների» կառուցակարգի պատշաճ գործարկում, սահմանադրական կարգի և օրինականության հաստատում, սահմանադրականության ձևավորում, սահմանադրական պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կամ սահմանադրական լիազորությունները չարաշահած սուբյեկտների նկատմամբ սահմանադրաիրավական սանկցիաների կիրառում, սահմանադրական իրավախախտումների կանխում, իրավաչափ վարքածի խրախուսում: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հասկացության, սուբյեկտային կազմի և այլնի մասին համանման և այլ տեսակետներ են առկա նաև այլ հեղինակների աշխատանքներում (տե՛ս, օրինակ, **Ռ. Քալաշյան**, ՀՀ և ՌԴ նախագահի սահմանադրաիրավական պատասխանատվության հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն), ի. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2010):

<sup>29</sup> **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշտադիտարկում, էջ 124-125:

2015 թվականների խմբագրություններով) և ընթացիկ օրենսդրության համադիր ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դասակարգելու (տարբերակելու) կարգապահական պատասխանատվության հետևյալ երկու տեսակները (փուլերը)<sup>30</sup>,

- անմիջականորեն՝ մեկ սուբյեկտի կողմից կիրառվող կարգապահական տույժ՝ նախագգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, աշխատավարձի մասից զրկում (վերջինս նախատեսվում է գուճորդված և ոչ առանձին տույժի ձևով)<sup>31</sup>,

- միջնորդավորված երկփուլ բարդ ընթացակարգով, երբ Արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահին առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, որի վերաբերյալ Նախագահը կայացնում է համապատասխան իրավական ակտ (2015 թվականի սահմանադրական փոփոխությունները վերացնում են այս ընթացակարգը՝ բոլոր լիազորությունները վերապահելով մեկ սուբյեկտի՝ Բարձրագույն դատական խորհրդին):

Այդօրինակ կարգավորումը թերևս նպատակ ունի բարձրացնելու կարգապահական պատասխանատվության ինստիտուտի արդյունավետությունը, քանի որ, ինչպես նշում է Վենետիկի հանձնաժողովը իր դիրքորոշման մեջ, Բարձրագույն դատական խորհրդի գոյության հիմնական նպատակն է դատավորների անկախության պաշտպանությունը իշխանության այլ ճյուղերի անհարկի ճնշումներից՝ դատավորների ընտրության և նշանակումների, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հարցերում<sup>32</sup>:

Այս կապակցությամբ, ի տարբերություն Արդարադատության խորհրդի ներկայիս դերի և գործառույթների, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հետևանքով (7-րդ գլուխն ուժի մեջ է մտնելու Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշ-

---

<sup>30</sup> Թեև սահմանադրական տեքստում առանձնացվում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերը, սակայն, մեր կարծիքով, դրանք մեկ փաստի՝ կարգապահական զանցանքի իրավական տարբեր հետևանքներն են: Պատասխանատվության ինստիտուտի միասնական կառուցման և հետևանքների (տույժերի տեսակների) տարբերակման այդ ընկալումն առավել հստակ և ամբողջական ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքում, որի 157 հոդվածի 1-ին մասում դրանք բնորոշվում են որպես կարգապահական տույժերի տեսակներ: Այդ առումով թերևս ընդունելի է Կոլումբիայի Սահմանադրությամբ սահմանված կարգավորման տրամաբանությունը. Սահմանադրության 160 հոդվածը սահմանում է դատավորին կարգապահական տույժերի (այդ թվում՝ պաշտոնից ազատում) ենթարկելու հնարավորությունը:

<sup>31</sup> Գարծում ենք սեփականության իրավունքի պաշտպանության և կրկնակի պատասխանատվության բացառման սահմանադրական սկզբունք-երաշխիքների տեսանկյունից առնվազն կասկածելի է այդ տույժի սահմանման և կիրառման իրավաչափությունը:

<sup>32</sup> See u Venice Commission, Opinion on the Reform of the Judiciary in Bulgaria, CDL-INF (1999)005, para. 28): Մեջբերումն ըստ՝ **Գ. Բ. Դանիելյան, Վ. Ն. Այվազյան, Ա. Ա. Մանասյան**, նշվ. աշխ., էջ 163:

տոնի ստանձնման օրը) էականորեն փոխվում են նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկող միակ սուբյեկտի Բարձրագույն դատական խորհրդի նշանակությունը և կարգավիճակը: Այդ կապակցությամբ հետազոտությունը և գնահատականները կարող են ամբողջական լինել ու պետք է լրացվեն հետագա դատաիրավական օրենսդրության և Խորհրդի գործունեության համալիր ուսումնասիրման միջոցով:

Նկատի ունենալով դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի սահմանադրական բնույթն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց համալիր ամրագրման ու կիրառման անհրաժեշտությունը՝ կարծում ենք, որ Սահմանադրության տեքստում անհրաժեշտ է հստակորեն ամրագրել դատավորի կարգապահական պատասխանատվության վարույթի սահմանադրական կարգավիճակը, վարույթի իրականացման հիմնական սկզբունքները, վարույթին մասնակցող սուբյեկտների շրջանակը և նրանց լիազորությունների ծավալը և պատասխանատվության միջոցների սպառիչ ցանկը, հետևաբար՝ այդ կապակցությամբ իրականացվող իրավական գործընթացները (այդ թվում՝ սահմանադրական վեճերի և պատասխանատվության հարցի լուծումը) գնահատել հենց սահմանադրական դիտանկյունից՝ որպես **սահմանադրական վարույթ**:

Այս կապակցությամբ հատկանշական է ՌԴ սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ **բոլոր վեճերը, որոնք իրենց իրավաբանական բնույթով, բնութագրմամբ և հետևանքներով սահմանադրական են, լուծվում են սահմանադրական վարույթի կարգով**<sup>33</sup>: Միջազգային փորձը ևս վկայում է, որ սահմանադրական պատասխանատվության իրավակարգավորումն անհրաժեշտ է իրականացնել Հիմնական օրենքի մակարդակում՝ հստակեցնելով՝

*ա) նման պատասխանատվության սուբյեկտ համարվող անձանց շրջանակը,*

*բ) նման պատասխանատվության հարցը բարձրացնող սուբյեկտների շրջանակը,*

*գ) սահմանադրական ինստիտուտը, որն իրավասու է նման հարց քննության առնել և որոշում կայացնել*<sup>34</sup>:

Այսպիսով՝ ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք եզրահանգել, որ **դատավորը սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է, իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը, ըստ էության, սահմանադրական վարույթ**: Ընդ որում՝ կարող ենք վեր հանել և հավաստել դատավորի կարգապահական պատասխանատվության՝ որպես սահմանադրական իրողութ-

<sup>33</sup> Տե՛ս «ՌԴ սահմանադրական դատարանի 2007 թվականի մարտի 21-ի № 3-Ո որոշումը» (//СЗ РФ.2007. № 14. С. 1741), մեջբերվում է ըստ՝ **Н. С. Бондарь**, նշվ. աշխ., էջ 51:

<sup>34</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշտադիտարկում, էջ 126:

յան (ինստիտուտի և վարույթի) հետևյալ հատկանիշները.

- ՀՀ իրավական համակարգում դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի հիմքերն ուղղակիորեն սահմանված են Հիմնական օրենքի տեքստում և դրան համապատասխան՝ ընթացիկ օրենսդրությամբ, ընդ որում՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվելու են սահմանադրական օրենք համարվող ակտերով՝ **«Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ դատական օրենսգրքով,**

- դատավորի կարգապահական պատասխանատվությունը արդարադատություն իրականացնող սուբյեկտի՝ որպես դատական իշխանության միակ կրողի կողմից իր **սահմանադրական առաքելության**՝ արդարադատության իրականացման գործընթացում խախտումների կատարման իրավական անխուսափելի հետևանքն է,

- դատավորի կարգապահական պատասխանատվությունը իր սահմանադրական պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կամ իր սահմանադրական լիազորությունները չարաչափած սուբյեկտի՝ դատավորի նկատմամբ **սահմանադրաիրավական սանկցիաների** կիրառման ընթացակարգ է, որի հետևանքով անձը որոշակի զրկանքներ է կրում (այդ թվում՝ նյութական), ընդհուպ կարող է զրկվել դատավորի սահմանադրական կարգավիճակից (արդարադատություն իրականացնելու հատուկ լիազորությունից),

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ներգրավվում են և պատասխանատվության հարցը լուծում են բացառապես Սահմանադրությամբ նախատեսված սուբյեկտները՝ **ՀՀ Նախագահ, Արդարադատության խորհուրդ (2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ միայն Բարձրագույն դատական խորհուրդ),** որոնց լիազորությունների շրջանակը ամրագրվում է բացառապես սահմանադրորեն (այդ թվում՝ սահմանադրական օրենքներով),

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացն ունի հատուկ՝ **սահմանադրական կարգավորում**. ընթացակարգը հանգամանորեն կանոնակարգվում է Սահմանադրությամբ, Դատական օրենսգրքով, Սահմանադրական դատարանի մասին օրենքով (2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո):

Մեր կարծիքով, դատավորի կարգապահական սահմանադրական պատասխանատվության վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները և սահմանադրաիրավական (նորմատիվ-տեքստային) ձևակերպումները, դատական իշխանության (դատավորի և դատարանի) անկախության ապահովման սահմանադրական կառուցակարգում ունենալով մեթոդաբանական ներուժ և վեկտորներ, այդուհանդերձ ՀՀ ի-

րավական համակարգում չեն ստացել համարժեք դրսևորում և իրացում: Հետևաբար՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության տեքստի՝ սահմանադրական կարգի հիմունքներում և դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական բանաձևերում ու կառուցակարգերում ամրագրված սկզբունքները (դատական իշխանության անկախություն, իշխանությունների տարանջատում, արդյունավետ դատական միջոցների իրավունք, դատավորի անփոփոխելիություն և այլն) պետք է լիարժեք արտացոլվեն նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու սահմանադրաիրավական ինստիտուտի հետագա օրենսդրական կարգավորման մեջ և համաչափորեն իրացվեն այդ սահմանադրական վարույթում (սահմանադրաիրավական պրակտիկայում): Այլ կերպ ասած՝ **ինդիրը սահմանադրական հիմնարար սկզբունքներն ազգային իրավական համակարգում և հասարակական պրակտիկայում կյանքի կոչելն է**<sup>35</sup>:

*Բանալի բառեր – Սահմանադրություն, սահմանադրական վարույթ, կարգապահական վարույթ, դատավորի սահմանադրական պատասխանատվություն, Արդարադատության խորհուրդ, դատական իշխանություն, դատավորի անկախություն*

**ГНЕЛ МУГНЕЦЯН, ТИГРАН АВЕТИСЯН – Конституционно-правовой характер дисциплинарной ответственности судьи.** – В статье рассматриваются характер и содержание дисциплинарного производства в отношении судьи с конституционно-правовой точки зрения. Анализ конституционных текстов и текущего законодательства, исследование судебной-правовой практики и доктринальных источников раскрывают существенные признаки и характеристики дисциплинарного производства по привлечению судьи к ответственности. Формируется конституционная концепция дисциплинарной ответственности судьи. Существующие доктринальные подходы и конституционно-правовые (нормативные текстовые) формулировки в связи с дисциплинарной ответственностью судьи, имея в конституционном механизме методологический потенциал обеспечения независимости судебной власти, тем не менее, адекватно не выражены в конституционном и текущем законодательстве РА и в государственно-правовой (в том числе конституционно-судебной (Конституционный суд и Совет юстиции) практике.

**Ключевые слова:** конституция, конституционное производство, дисциплинарное производство, конституционная ответственность судьи, Совет юстиции, судебная власть, независимость судьи

**GNEL MUGHNETSYAN, TIGRAN AVETISYAN – Constitutional-Legal**

---

<sup>35</sup> Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Եր., 2004, էջ 2:

***Character of Disciplinary Liability of a Judge.-*** The article deals with and reveals questions related to the nature and content of the institute of disciplinary responsibility of judges from the constitutional-legal point of view. Based on comparative and content analysis of the constitutional text and the current legislation, the applicable legal and judicial practice and study of doctrinal sources the essential features and characteristics of the disciplinary proceeding to bring the judges to liability are revealed. As a result of the researches performed, a constitutional concept of the disciplinary liability of a judge is formulated.

According to the authors, though existing doctrinal approaches and constitutional and legal formulations regarding the disciplinary-constitutional liability of a judge contain constitutional mechanism for ensuring independence of the judicial power (judges and courts) methodological potential and vectors, however they do not have adequate expression and implementation both in constitutional and current legislation of the Republic of Armenia and the state legal (including constitutional-judicial (Constitutional Court and Council of Justice)) practice.

**Key words:** *constitution, constitutional proceeding, disciplinary proceeding, constitutional liability of a judge, Council of Justice, judicial power, the independence of a judge*



**ПООЩРИТЕЛЬНЫЕ НОРМЫ КАК  
УГОЛОВНО-ПРАВОВЫЕ СРЕДСТВА БОРЬБЫ  
С КОРРУПЦИОННЫМИ ПРЕСТУПЛЕНИЯМИ**

**МИСАК МАРКОСЯН**

Проблема правового обеспечения безопасности государства весьма многогранна, что обуславливает необходимость скоординированного подхода к разным направлениям правовой политики. Однако в системе мер по правовому обеспечению безопасности выделяются меры, призванные обеспечить коррупционную безопасность.

В настоящее время противодействие коррупции весьма актуально как для Армении, так и для всего международного сообщества. Широко обсуждаются важнейшие аспекты стратегии борьбы с коррупцией, представляющей реальную угрозу нормальному функционированию государственного механизма. Эта проблема является составной частью общей проблемы по обеспечению государственной безопасности, без решения которой невозможно построить правовое государство. Масштаб угрозы, которую представляет коррупция, обуславливает необходимость пересмотреть приоритеты антикоррупционной политики.

Важным приоритетом антикоррупционной политики должно стать законодательное расширение возможностей освобождения от уголовной ответственности лиц, сотрудничающих в борьбе с коррупционными преступлениями. Другими словами, наряду с карательным методом уголовного права должен широко применяться и поощрительный метод, что, в свою очередь, поможет реализовать принцип экономии уголовной репрессии.

Как справедливо отмечает Р. М. Мелтонян, нельзя ограничивать сферу уголовно-правовых исследований только понятием наказания и норм, его регламентирующих<sup>1</sup>. Возросшие требования и задачи успешной борьбы с коррупционными преступлениями требуют применять иные средства из арсенала уголовно-правовой борьбы, в частности, поощрительные уголовно-правовые нормы.

Как известно, взяточничество относится к категории латентных преступлений. Как правило, и взяточполучатель и взяточдатель заинтересованы, чтобы факт получения-дачи взятки не получил огласки. Поэтому обеспечение своевременного раскрытия взяточничества требует комплекса мер, в том числе и на законодательном уровне.

---

<sup>1</sup> См. Мелтонян Р. М. Поощрительные нормы Уголовного Кодекса Российской Федерации: Автореф. дис... кандидата юрид. наук. Рязань, 1999, с. 1.

Часть третья статьи 37 Конвенции ООН против коррупции, принятой резолюцией 58/4 Генеральной Ассамблеи от 31 октября 2003 года, гласит: «Каждое государство-участник рассматривает вопрос о том, чтобы предусмотреть возможность, в соответствии с основополагающими принципами своего внутреннего законодательства, предоставления иммунитета от уголовного преследования лицу, которое существенным образом сотрудничает в расследовании или уголовном преследовании в связи с каким-либо преступлением, признанным таковым в соответствии с настоящей Конвенцией»<sup>2</sup>.

Нетрудно заметить, что в данной правовой норме речь идет о любом участнике коррупционной сделки – о взяткодателе, взяткополучателе и посреднике. Однако закрепленная в Уголовном Кодексе (УК) Республики Армения поощрительная норма касается только взяткодателя. На наш взгляд, такое регулирование вопроса не вытекает из принципа равенства перед законом, так как один из трех фигурантов коррупционной сделки – взяткодатель приобретает привилегированное положение в сравнении с взяткополучателем и посредником.

В качестве положительного примера можно привести примечание к статье 291.1 УК РФ, согласно которому: «Лицо, являющееся посредником во взяточничестве, освобождается от уголовной ответственности, если оно после совершения преступления активно способствовало раскрытию и (или) пресечению преступления и добровольно сообщило органу, имеющему право возбудить уголовное дело, о посредничестве во взяточничестве»<sup>3</sup>.

Что касается освобождения от уголовной ответственности взяткополучателя, то в юридической литературе существует мнение о том, что в целях повышения эффективности противодействия взяточничеству было бы целесообразно закрепить в законе положение, регламентирующее порядок освобождения от уголовной ответственности не только давателя, но и получателя незаконного вознаграждения<sup>4</sup>.

Следует согласиться с мнением профессора Б. В. Волженкина, что «интересы борьбы с коррупцией требуют доведения до логического конца идеи, закрепленной в примечании к статье 291 УК РФ, об освобождении от уголовной ответственности лиц, давших взятку и добровольно заявивших о содеянном. Последовательно проводя эту важную идею деятельного раскаяния, следует, безусловно, распространить данное правило на посредников во взяточничестве и на всех других лиц, являвшихся соучастниками в даче и

---

<sup>2</sup> [http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/corruption.shtml](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/corruption.shtml).

<sup>3</sup> [https://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/a74ca4364cb5aa0d95db2b7636907af350ab52c8/](https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/a74ca4364cb5aa0d95db2b7636907af350ab52c8/).

<sup>4</sup> См. Папиашвили Ш. Г. Проблема должностных преступлений и борьбы с ними по советскому уголовному праву и судебной практике (По материалам Грузинской ССР): Автореф. дис... д-ра юрид. наук. Тбилиси, 1983, с. 49; Тумаркина Л. П. Коммерческий подкуп. М., 2005, с. 132-133.

получении взятки, в том числе и на взяткополучателя»<sup>5</sup>.

Закрепление нормы об освобождении взяткополучателя от уголовной ответственности, на наш взгляд, будет соответствовать принципу справедливости и положениям Конвенции ООН против коррупции, а также способствовать снижению латентности взяточничества. Считаем, что реализация данного нормативного установления уменьшит число заинтересованных лиц, стремящихся решить свои проблемы при помощи дачи взятки, так как при этом существенно увеличивается риск их разоблачения.

Так, согласно статье 30-й закона РА «Об оперативно-розыскной деятельности» мероприятие «имитация получения или дачи взятки» может проводиться на основании письменного заявления как лица, получившего предложение о даче или получении взятки. Сопоставляя данную норму с положениями УК РА, можно выявить некоторое несоответствие правового регулирования. По заявлению должностного лица о предложении ему взятки в отношении взяткодателя может быть произведено оперативно-розыскное мероприятие, однако само это лицо нельзя освободить от уголовной ответственности, если оно после совершения преступления добровольно сообщило о получении взятки.

Кроме того, примечание 1 к ст. 305 Модельного УК для стран СНГ гласит: «Лицо, получившее взятку, не связанную с ее вымогательством, освобождается судом от наказания, если оно явилось с повинной, не зная об осведомленности органов власти о совершенном им преступлении, активно способствовало его раскрытию, возвратило полученное или возместило его стоимость»<sup>6</sup>.

На наш взгляд, аналогичную норму целесообразно предусмотреть и в УК РА, но не закреплять в качестве условия освобождения от ответственности возвращение полученного или возмещение его стоимости, поскольку предмет взятки (в случае, если не было вымогательства и взятка не была подконтрольной) всегда обращается в доход государства и взяткодатель не может на него претендовать. Кроме того, справедливо будет распространить данную норму только на основной состав получения взятки, так как наличие квалифицирующих признаков получения взятки придает преступлению чрезвычайную общественную опасность, при которой позитивное посткриминальное поведение должностного лица может влиять только на объем назначаемого ему уголовного наказания.

Исходя из вышеизложенного, считаем целесообразным закрепить в УК РА поощрительные нормы, касающиеся взяткополучателя и посредника во взяточничестве. Предлагаем статью 311 УК РА дополнить частью пятой, следующего содержания: «Лицо, совершившее преступление, пре-

---

<sup>5</sup> Волженкин Б. В. Избранные труды по уголовному праву и криминологии (1963 – 2007). СПб., 2008, с. 427-428.

<sup>6</sup> Принят Постановлением Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств от 17.02.1996 // <http://www.iacis.ru/upload/iblock/753/019.pdf>.

дусмотренное частью первой настоящей статьи, освобождается от уголовной ответственности за данное преступление, если оно до того, как о совершенном преступлении стало известно органам уголовного преследования, но не позднее, чем в течение десяти дней после совершения преступления, добровольно явилось с повинной и активно способствовало раскрытию преступления». Также предлагаем статью 313 УК РА дополнить частью третьей, следующего содержания: «Лицо, виновное в посредничестве во взяточничестве, освобождается от уголовной ответственности за данное преступление, если оно до того, как о совершенном преступлении стало известно органам уголовного преследования, но не позднее, чем в течение десяти дней после совершения преступления, активно способствовало раскрытию или пресечению преступления и добровольно сообщило органу, имеющему право возбудить уголовное дело, о совершенном преступлении».

Что касается вопроса освобождения лица от уголовной ответственности за дачу взятки, то согласно части четвертой статьи 312 УК РА: «Взяткодатель освобождается от уголовной ответственности, если имело место вымогательство взятки, и если это лицо до того, как о даче взятки стало известно органам уголовного преследования, но не позднее, чем в течение трех дней после совершения преступления, добровольно сообщило о даче взятки органам уголовного преследования и способствовало раскрытию преступления».

Анализ данной нормы показывает, что для освобождения лица от уголовной ответственности за дачу взятки требуется одновременное соблюдение следующих условий:

- 1) в отношении лица, давшего взятку, имело место вымогательство взятки,
- 2) лицо после дачи взятки добровольно заявило о содеянном органам уголовного преследования,
- 3) заявление было подано до того, как о даче взятки стало известно органам уголовного преследования,
- 4) заявление было подано не позднее, чем в течении трех дней после совершения преступления,
- 5) лицо способствовало раскрытию преступления.

По нашему мнению, в УК РА вымогательство взятки должно быть предусмотрено в качестве самостоятельного основания для освобождения взяткодателя от уголовной ответственности, как это закреплено, например, в примечании к статье 291 УК РФ. Это обосновывается тем, что в части третьей статьи 37 Конвенции ООН против коррупции в качестве основания для предоставления иммунитета от уголовного преследования предусмотрено только сотрудничество лица в расследовании или уголовном преследовании в связи с коррупционным преступлением, а о вымогательстве

взятки в данной международно-правовой норме не упоминается. Получается, что часть четвертая статьи 312 УК РА сужает возможности реализации данной международно-правовой нормы. Кроме того, по отношению к взяткодателю факт вымогательства взятки носит объективный характер, так как не зависит от его воли, а перечисленные в части четвертой статьи 312 УК РА остальные четыре условия носят субъективный характер. Объединение объективных и субъективных условий освобождения взяткодателя от уголовной ответственности в одно целое не соответствует природе поощрительных норм. В этом плане считаем более обоснованным по примеру УК РФ предусмотреть вымогательство взятки в качестве самостоятельного основания для освобождения взяткодателя от уголовной ответственности.

В свою очередь, примечание к статье 391 УК РФ тоже нуждается в некоторой коррекции. Согласно данному примечанию: «Лицо, давшее взятку, освобождается от уголовной ответственности, если оно активно способствовало раскрытию и (или) расследованию преступления и либо имело место вымогательство взятки со стороны должностного лица, либо лицо после совершения преступления добровольно сообщило о даче взятки органу, имеющему право возбудить уголовное дело».

Во-первых, целесообразно в данном примечании предусмотреть условие о том, что заявление должно быть подано до того, как о даче взятки стало известно органам уголовного преследования. Это условие эффективно дополняет законодательное требование о том, что заявление о даче взятки должно быть добровольным. На практике могут возникнуть ситуации заявления о даче взятки, в которых вопрос добровольности заявления является спорным. Например, можно ли считать добровольным заявление лица о даче взятки, если органы уголовного преследования по уголовному делу, возбужденному по факту получения и дачи взятки, в качестве свидетеля допрашивают третье лицо, которое в ходе допроса заявляет, что оно тоже давало взятку данному должностному лицу? Закрепление в поощрительной норме условия о том, что заявление должно быть подано до того, как о даче взятки стало известно органам уголовного преследования, исключит спорность вопроса о добровольности заявления в таких ситуациях.

Во-вторых, считаем целесообразным предусмотреть временное ограничение подачи заявления о даче взятки, что обосновывается криминологическими и уголовно-правовыми аргументами. Так, временное ограничение заявления о даче взятки сделает возможным на более ранней стадии пресечь дальнейшую коррупционную деятельность должностного лица. Кроме того, запоздалое заявление о даче взятки значительно уменьшает возможности доказать факт взятничества<sup>7</sup>. По нашему мнению, трехднев-

---

<sup>7</sup> См.: Якименко А. Как усилить борьбу со взяточничеством? // "Социалистическая законность", 1986, № 8, с. 12; Папашвили Ш. Г. Должностные преступления в теории

ный срок, предусмотренный УК РА слишком короток, и оптимальным сроком для подачи заявления о даче взятки представляется десять дней с момента дачи взятки.

На основе вышеизложенного, предлагаем часть четвертую статьи 312 УК РА изложить в следующей редакции: «Взяткодатель освобождается от уголовной ответственности, если имело место вымогательство взятки, или если это лицо до того, как о даче взятки стало известно органам уголовного преследования, но не позднее, чем в течении десяти дней после совершения преступления, добровольно сообщило о даче взятки органам уголовного преследования и способствовало раскрытию преступления».

Аналогичные изменения и дополнения целесообразно внести не только в статьи УК о получении, даче взятки и посредничестве во взяточничестве, но и в статьи, предусматривающие уголовную ответственность за иные коррупционные преступления, такие как коммерческая взятка, получение незаконного вознаграждения публичным служащим, не являющимся должностным лицом, дача ему незаконного вознаграждения.

Реализация представленных в статье законодательных предложений по расширению возможностей применения поощрительных уголовно-правовых норм в борьбе с коррупционными преступлениями будет содействовать совершенствованию законодательной практики и уголовной политики.

**Ключевые слова:** коррупция, поощрительные нормы, взятка, получение взятки, дача взятки, посредничество во взяточничестве, вымогательство взятки, Уголовный Кодекс, должностное лицо, освобождение от уголовной ответственности

**ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ – Խրախուսական նորմերը որպես կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի քրեաիրավական միջոցներ** – Հոդվածում քննարկվում են կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի քրեաիրավական միջոցների համակարգում խրախուսական նորմերի դերի, դրանց օրենսդրական ամրագրման և կիրառման հետ կապված հարցերը: Ըստ հեղինակի՝ պետության հակակոռուպցիոն քաղաքականության կարևոր առաջնահերթություն պետք է դառնա այն անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունների օրենսդրական ընդլայնումը, ովքեր համագործակցում են քրեական հետապնդման մարմինների հետ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում:

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի մասին կոնվենցիայի, ԱՊՀ երկրների մոդելային քրեական օրենսգրքի, ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերի համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում հեղինակի կողմից ներկայացվում են կոնկրետ օրենսդրական առաջարկություններ կաշառակերության գործարքի մասնակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին խրախուսական նորմերի նախատեսման և կատարելագործման վերաբերյալ:

**Բանալի բառեր** – կոռուպցիա, խրախուսական նորմեր, կաշառք, կաշառք ստանալ, կաշառք տալ, կաշառքի միջնորդություն, կաշառքի շորթում, քրեական օրենսգիրք, պաշտոնատար անձ, քրեական պատասխանատվությունից ազատել

**MISAK MARKOSYAN – *Promoting Norms as Criminal Legislative Tools of Struggle Against Corruption Crimes.*** – The issues of role, legislative enshrinement and application of promoting norms in the system of criminal legislative tools of struggle against corruption crimes are discussed in the article. In author’s opinion, the expansion of legislative possibilities of exemption from criminal responsibility of persons who collaborate with prosecution bodies to fight against corruption should be a priority of state anti-corruption policy. Based on the analysis of the United Nations Convention against Corruption, CIS model Criminal Code, Criminal Codes of RA and Russian Federation, author suggests legislative proposals related to the improvement of promoting norms exempting participants of bribery from criminal liability.

**Key words:** *corruption, promoting norms, bribe, taking bribe, giving a bribe, bribery mediation, bribery-extortion, Criminal Code, public official, exemption from criminal responsibility*

# ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺՈՂԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ՍԵՐԳԵՑ ՄԱՐԱԲՅԱՆ

Քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության հետևանքով տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ ժամանակակից քրեական արդարադատության համակարգում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը քրեական դատավարության կարևորագույն և առանցքային խնդիրներից մեկն է:

Տուժողը քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ և ունի սեփական շահերը, որոնց ապահովման համար օժտված է դատավարական մի շարք իրավունքներով ու պարտականություններով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59 հոդված): Տուժողի իրավաչափ շահերի շրջանակում են նրան հասցված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը ու դրա քրեաիրավական ճիշտ որակումը, հանցանք կատարած անձի դատապարտումը և նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելը: Հետևաբար, քրեական դատավարությանը տուժողի մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 58 հոդվածի համաձայն՝ «1. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

2. Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:



Օրենսգրքի 59 հոդվածի համաձայն՝ «...Տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությանը պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «տուժող» հասկացության հատկանիշներին, 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «տուժող» հասկացությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն՝ այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագործությանը վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով դատավարական որոշակի իրավունքներ և պարտականություններ: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

ՌԴ սահմանադրական դատարանը, անդրադառնալով տուժող ճանաչելու հիմնախնդրին, 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ անձի՝ սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում իրականացվում է ոչ թե նրան ձևական առումով այս կամ այն դատավարական կարգավիճակ տալով, մասնավորապես՝ տուժող ճանաչելով, այլ որոշակի էական հատկանիշների առկայության դեպքում, որոնք բնութագրում են այդ անձի փաստացի կարգավիճակը՝ որպես համապատասխան իրավունքների պաշտպանության կարիք ունեցողի: Դատարանի գնահատմամբ՝ անձի՝ որպես տուժողի իրավական վիճակը դատավարությունում հաստատվում է ըստ նրա փաստացի կարգավիճակի. տուժող ճանաչելու որոշմամբ նա միայն դատավարական առումով է ձևակերպվում տուժող, այլ ոչ թե տուժող է դառնում վարույթն իրականացնող մարմնի կողմից<sup>1</sup>:

Վերոնշյալ օրենսդրական կանոնակարգումներից և իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում, որ տուժող կարող են ճանաչվել

<sup>1</sup> Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշումը, <http://www.rg.ru/2005/06/15/opredelenie-ks-dok.html>

բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, դրանցից զատ իրավունքի որևէ այլ սուբյեկտ քրեական դատավարությունում տուժող չի կարող ճանաչվել, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով տուժող ճանաչելու ենթակա սուբյեկտներին (ֆիզիկական և իրավաբանական անձին) որոշելու համար միայն քրեական դատավարության օրենսգիրքը, որը սահմանում է «տուժող» հասկացության միայն դատավարական հատկանիշը, բավարար չէ. այդ հասկացության իրավական հատկանիշը պարզաբանելու համար անհրաժեշտ է նաև վերլուծել իրավական այլ ակտեր, որոնց շարքում առանցքային է մասնավորապես՝ քրեական օրենսդրությունը, իսկ կոնկրետ հանցագործության առանձնահատկություններից էլնելով՝ նաև քաղաքացիական օրենսդրությունը և իրավական այլ ակտերը:

Այս հետևությունը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ **«հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային, ֆիզիկական և բարոյական վնաս»** հասկացությունների պարզաբանումը հնարավոր չէ միայն քրեական դատավարության օրենսդրությամբ, դա հնարավոր է նախևառաջ քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հանցակազմերի, առանձին դեպքերում՝ նաև քաղաքացիական օրենսդրության և իրավական այլ ակտերի վերլուծության միջոցով, որոնք սկզբունքային նշանակություն ունեն քրեական դատավարությունում անձին տուժող (նաև քաղաքացիական հայցվոր) ճանաչելու հարցերը լուծելու համար:

Այլ կերպ ասած՝ տուժողը միայն քրեադատավարական հասկացություն չէ, այն միջճյուղային, նախևառաջ քրեաիրավական հասկացություն է<sup>2</sup>: Հետևաբար, քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հարցը ճիշտ լուծելու համար մեթոդաբանական նշանակություն ունի քրեական, քրեադատավարական, ինչպես նաև կոնկրետ հանցագործության բնույթից և առանձնահատկություններից էլնելով՝ օրենսդրության այլ պահանջների համակարգային վերլուծությունը:

Այս տեսանկյունից համակարծիք ենք Վ. Բոժևի այն մոտեցմանը, որ խառը (քրեաիրավական և դատավարական) հարցեր հետազոտելիս պետք է նկատի ունենալ, որ քրեական դատավարության գոյությունը պայմանավորված (դետերմինացված) է քրեական իրավունքով: Քրեական դատավարությունը համարվում է քրեական օրենքի նորմերի կիրառման եզակի խողովակ և քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց նյութաիրավական պահանջները իրականացնելու եզակի եղանակ: Քրեական իրավունքը ազդում է քրեական դատավարության մի շարք նորմերի, նույնիսկ ինստիտուտների ձևավորման վրա, իսկ քրեական դատավարությունը, իր հերթին, ստեղծում

---

<sup>2</sup> Այս մասին տե՛ս նաև **Красиков А. Н.** Сущность и значение согласия потерпевшего в советском уголовном праве. Саратов, 1976, **Божьев В.** Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе // "Законность", 2005, № 11:

Է նախադրյալներ և որոշում է քրեական օրենսգրքի նորմերի կիրառման կառուցակարգերը: Ըստ այդմ՝ նյութաիրավական և դատավարական մի շարք հասկացություններ և կառուցակարգեր փոխգործում են (օրինակ հանցակազմ և ապացուցման առարկա, հանցագործության սուբյեկտ և մեղադրյալ), **որոնց շարքում է նաև «տուժող» քրեադատավարական հասկացությունը**: Հեղինակը նշում է նաև, որ ցավոք այնպես է ստացվել, որ քրեական օրենսգրքում հանցագործությունից տուժող անձի բնորոշումը բացակայում է, դրա համար քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը ստիպված է եղել ներառել տուժողի ոչ միայն քրեադատավարական, այլև քրեաիրավական հասկացությունը: Մասնավորապես նշելով, որ անձը համարվում է տուժող, եթե դրա համար առկա են նյութաիրավական նախադրյալներ, այսինքն քրեորեն պատժելի վնաս, որը պատճառվել է հանցագործությամբ, օրենսդիրը դրանով իսկ տալիս է տուժողի քրեաիրավական հասկացությունը: Անձին քրեական գործով տուժող ճանաչելու հարցը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ հանցագործությամբ անձին պատճառվել է վնաս, որը նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում<sup>3</sup>:

Այսինքն՝ քրեաիրավական հարաբերության որևէ սուբյեկտի քրեական գործով տուժող ճանաչելու համար նախնառաջ անհրաժեշտ է, որ նա լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այնուհետև անհրաժեշտ է պարզել, որ հանցագործությամբ նրան պատճառվել է այնպիսի գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս), որը նախատեսված է քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմում որպես դրա պարտադիր հատկանիշ, և որը պատճառելու համար նախատեսված է քրեական պատիժ (անմիջական պատճառական կապը), ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածի և 59 հոդվածի 5-րդ մասի ուժով նրան քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հիմք է: Այլ կերպ ասած՝ տուժող ճանաչելու որոշում կայացնելիս իրավասու սուբյեկտի տրամադրության տակ պետք է առկա լինեն բավարար հիմքեր առ այն, որ հանցագործությունից վնաս է կրել հենց ֆիզիկական կամ իրավաբանական անձը, և որ այդ վնասը հանցակազմի հատկանիշ համարվող այն վնասն է (վնասները), որը (որոնք) պատճառվել է (են) անմիջականորեն հանցագործությամբ և սահմանված է (են) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածում և 59 հոդվածի 5-րդ մասում:

Այս գաղափարախոսությունը համապատասխանում է հանցագործության օբյեկտի, օբյեկտիվ կողմի և հանցագործության հետևանքների վերաբերյալ քրեական իրավունքի դրույթներին:

---

<sup>3</sup> Տե՛ս **Божьев В.**, նշվ. աշխ.:

ՀՀ քրեական օրենսգրքի 18 հոդվածը սահմանում է, որ հանցագործություն է համարվում հանրորեն վտանգավոր, մեղավորությամբ կատարված այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: Քրեական օրենսգրքի Հատուկ մասում սահմանված են քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվողի շահերին վնաս պատճառող արարքները: Հանցագործությունը ի գորու է առաջացնել բազմաթիվ հետևանքներ, որոնք կարող են լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթի, իրավունքների խախտման տեսքով և այլն: Եվ որպեսզի որոշվի, թե ով կարող է լինել կոնկրետ դեպքում տուժող, անհրաժեշտ է վերլուծել կոնկրետ հանցակազմը և նախևառաջ այդ հանցագործության օբյեկտն ու օբյեկտիվ կողմը, մասնավորապես այն, թե ինչ շահի պաշտպանության համար է քրեականացված կոնկրետ արարքը, և ինչ շահի խախտման և վնաս պատճառելու համար է նախատեսված քրեական պատասխանատվությունը: Այս հանգամանքի հաշվառմամբ է, որ տուժող սուբյեկտի հասկացությունը սահմանելիս օրենսդիրը քրեական դատավարության օրենսգրքում պարտադիր պայման է նախատեսել հանցագործության և տուժողի կրած գույքային, բարոյական կամ ֆիզիկական վնասի (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս) միջև անմիջական պատճառական կապը<sup>4</sup>:

